Արձանագրության 5

Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի բազմաբնակարան շենքերի շքամուտքերի վերանորոգման աշխատանքների ձեռքբերման «ԵՔ-ՀԲՄԾՁԲ-17/3» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք.Երևան 05.09.2017թ.
Ժամը՝ 10:40

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Տեր-Թորոսյան
Հանձնաժողովի անդամներ՝ Վ. Մարգարյան (ԳԱ), Է. Հարոյան (ԳԱ)
Ա. Մարտիրոսյան (ԲԱ), Ա. Հայրապետյան (ԲԱ),
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Համբարձումյան

1. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացված հարցման և առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու մասին

(Ա. Տեր-Թորոսյան)

1. Ընդունել ի գիտություն որ.

1.1 «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի /այսուհետ՝ Կարգ/ 43-րդ կետի 3-րդ ենթակետի՝ հարցում էր ներկայացվել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող հրավերով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է եզրակացություն, համաձայն որի մասնակցի «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշը համապատասխանում է հրավերով սահմանված պահանջներին,

1.2 «ԵՔ-ՀԲՄԾՁԲ-17/3» ծածկագրով հրատապ բաց մրցույթի ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակիցն էլեկտրոնային կայքի միջոցով հրավերով սահմանված ժամկետում ներկայացրել է որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը,

- Հանձնաժողովի քարտուղարը ներկայացված փաստաթղթերը, ինչպես նաև գնահատման թերթիկների երկուական օրինակները տրամադրել է ընթացակարգի գնահատող հանձնաժողովին,
- Հանձնաժողովի անդամները գնահատման թերթիկների մեկական օրինակները ներկայացրել են հանձնաժողովի քարտուղարին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5 դեմ - 0:

2. Հրատապ բաց մրցույթի ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման մասին

(Ա. Տեր-Թորոսյան)

Հիմք ընդունելով գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ներկայացրած գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց հաստատել հրատապ բաց մրցույթի ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի հայտի գնահատման արդյունքները.

Մասնակցի անվանումը	Հայտի գնահատականը
«Սասունասար» ՍՊԸ	Բավարար

Մասնակցի կողմից ներկայացված որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

3. «ԵՔ-ՀԲՄԾՁԲ-17/3» ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակցի մասին

(Ա. Տեր-Թորոսյան)

Հիմք ընդունելով սույն արձանագրության 2-րդ կետով ընդունած որոշումը՝ «ԵՔ-ՀԲՄԾՁԲ-17/3» ծածկագրով հրատապ բաց մրցույթի ընթացակարգի ընտրված մասնակից հայտարարել «Սասունասար» ՍՊԸ-ն:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

4. Գնման պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին

(Ա. Տեր-Թորոսյան)

4.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 3-րդ կետով ընդունած որոշումը, ինչպես նաև «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին կետը.

- **Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի բազմաբնակարան շենքերի շքամուտքերի վերանորոգման աշխատանքների** կատարման պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել «Սասունասար» ՍՊԸ-ին:

4.2 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և սահմանել անգործության ժամկետ հինգ օրացուցային օր:

Ընդունվել է որոշում՝ կողմ -5, դեմ - 0:

5. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին

(Ա. Տեր-Թորոսյան)

Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել գնման պայմանագիր կնքելուն օրվան հաջորդող աշխատանքային օրը ժամը 14:30-ին, Երևանի քաղաքապետարանի վարչական շենքում, հասցե՝ ք. Երևան, Արգիշտի փողոց 1:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Ա. Տեր-Թորոսյան

Անդամներ՝ ---------- Ա. Մարտիրոսյան

---------- Ա. Հայրապետյան

---------- Վ. Մարգարյան

---------- Է. Հարոյան

Քարտուղար՝ ---------- Ա. Համբարձումյան